Ղեկավարվելով «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով և 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմին գույք հանձնելու մասին» N 1893-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման վերնագիրը և 1-ին կետը «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման» բառերից հետո լրացնել «և զարգացման» բառերով.

2) որոշման հավելվածի վերնագրում «Հայաստանի Հանրապետության կառավարության տարածքային կառավարման» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման» բառերով.

3) որոշման հավելվածի 2-րդ, 6-8-րդ, 11-րդ, 13-րդ, 16-րդ, 20-րդ, 29- 33-րդ, 38-րդ, 39-րդ, 48-րդ, 49-րդ, 58-րդ, 59-րդ, 65-68-րդ, 75-րդ, 76-րդ, 81-րդ, 82-րդ, 85-րդ, 87-րդ կետերը և «Ընդամենը» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Ընդամենը
2.	Սեղան՝ նախարարների տեղակալ-ների համար, նախշազարդ	լրակազմ	6	1064.0	6384.0
6.	Սեղան՝ երկու արկղով	հատ	62	108.4	6720.8
7.	Սեղան՝ մեկ արկղով	հատ	15	84.0	1260.0
8.	Նիստերի սեղան՝ 3.0 մ	հատ	6	136.0	816.0
11.	Սեղան՝ բուֆետի	հատ	2	55.0	110.0
13.	Լրագրասեղան՝ նախշազարդ	հատ	7	113.7	795.9
16.	Գրապահարան	հատ	57	115.0	6555.0
20.	Կախիչ՝ լամինատե, հայելիով	հատ	37	47.7	1763.7
29.	Աթոռ	հատ	368	45.5	16744.0
30.	Բազկաթոռ	հատ	14	300.0	4200.0
31.	Երկաթյա պահարան	հատ	30	58.5	1755.0
32.	Գորգ՝ սինթետիկ	հատ	7	425.1	2975.4
33.	Ուղեգորգ	գծմ	100	15.0	1500.0
38.	Մոնիթոր	հատ	3	161.0	483.0
39.	Լազերային տպիչ	հատ	40	195.5	7820.0
48.	Սառնարան	հատ	9	132.3	1190.7
49.	Սառնարան	հատ	8	182.3	1458.0
58.	Հեռուստացույց	հատ	11	140.0	1540.0
59.	Տեսաձայնագրիչ	հատ	1	77.5	77.5
65.	Օդորակիչ	հատ	5	360.0	1800.0
66.	Օդորակիչ	հատ	6	504.0	3024.0
67.	Օդորակիչ	հատ	14	600.0	8400.0
68.	Օդորակիչ	հատ	6	936.0	5616.0
75.	Մարդատար ավտոմեքենա (Պեժո)	հատ	2	5663.8	11327.5
76.	Համակարգիչ	հատ	1	287.3	287.3
81.	Թվային սիստեմային հեռախոսներ՝ <<LKD-30DS>>	հատ	24	66.8	1603.2
82.	Անալոգային հեռախոսաապարատ՝ GS-5140	հատ	87	12.3	1065.8
85.	Տաքացուցիչ	հատ	8	22.0	176.0
87.	Տաքացուցիչ՝ 1.5 կՎտ	հատ	11	17.0	187.0
	Ընդամենը				126964.1

».

4) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 15-րդ, 21-28-րդ, 34-րդ, 35-րդ, 53-րդ, 69-րդ, 70-րդ և 74-րդ կետերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 25-ի «Գույքը որպես նվիրատվություն ընդունելու մասին» N 47-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետը «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման» բառերից հետո լրացնել «և զարգացման» բառերով.

2) որոշման հավելվածի 6-րդ և 7-րդ կետերը և «Ընդամենը» բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

NN ը/կ	Անվանումը	Մոդելը	Թիվը (հատ)	Սերիական համարը	Ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
6.	Համակարգիչ	DualCore 3.000/MB Asrock/Cooler LGA/2xDDR 512 MB/HDD 80GB/FDD/Case/ DVD-RW Keyboard KB 06/Mouseopt./ Lan 10/100/1000	5		1144.5
7.	Մոնիթոր	(PL766AA) HP L1740 17'' TFT LCD	5		436.1
	Ընդամենը				4002.1

».

3) ուժը կորցրած ճանաչել որոշման հավելվածի 15-18-րդ և 20-րդ կետերը:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի «Գույք հետ վերցնելու և ամրացնելու մասին» N 681-Ա որոշման հավելվածի 340-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

4. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ 38874.7 հազ. դրամ սկզբնական արժեքով գույքը հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ համաձայն N 1 հավելվածի:

5. «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ 10199.7 հազ. դրամ սկզբնական արժեքով գույքը հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ համաձայն N 2 հավելվածի:

6. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի հետ համատեղ մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 4-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի հետ համատեղ մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 5-րդ կետում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

7. Սահմանել, որ «TOYOTA AVALON-3.5L», «HOVER CUV» և «Peugeot Pars» մակնիշների տրանսպորտային միջոցները պետական հաշվառումից հանելու և հաշվառելու հետ կապված ծախսերը ենթակա են իրականացման «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկի միջոցների հաշվին: